ԻԲ Ապրիլի (ՌՃԵ = 1656) որ Դշի լուսանայր ԻԳ կարի մերձ ի պահն հաւախօսի Կօմիտաս պալին եղաւ որ հիմիկս մարդ եղաւ։

(Զանազան ֆրճի խաղեր և անկապ խօսքեր)

Թվին Հայոց ՌՃԷ Ապրիլի ԺԱ Զատիկն անձրեւ էր մեղմագոյն։ Զոչ գրելն իմ ի մէջ աւագ պահոցս թէ զի՛ եղև, զպատճառն ես եղաք խոստովանօրէն, յոր ընդ աւուրսն փոխեցին զմեծ ղատին որ աստ ի քաղաքս։

Նաև Թումայ անուանեալն, զորոյ զգալն և զոչ ընդունելն յեկեղեցիսն և ուր ուրեք հանդիպիլն, անդէն ես զթողուլն և զընդունելն ոչ՝ գրեցաք։ Վասն որոյ և նայ ես անկեալ ի բռնակալս և ի նախարարս արքայի և մտեալ յչարէնէ առ վէզիրն՝ բազում ջանիւ առեալ զպատրիարքութիւն և զհարկն զիմաստական յաւելեալ, որ ասի միրի, քսակս Ժ, վասնզի յորոյ գուռ երթայր՝ քաղաքացիք երթեալ աւերէին, վասն որոյ աւելցոյց ի հարկէ զի մի խայտառակեսցեն ազգս և կամ բռնակալք։ Եւ գրեալ զամենայն տեղիս առաջնորդական գաւաղանացն ի պարաթի իւրում, զի ինքն իշխեսցէ յամենայն իշխանութիւնս Տաճկաց և ամ յամէ տացէ զմիրին, և զոր առնելոցն է առաջնորդ՝ արասցէ. եթէ փոխելն և թէ նստուցանելն, եթէ կալն եւ եթէ ճնալն՝ ամենայն ինչ ի ձեռս իւր. այսպէս և գրեալ զՆրուսաղէմ ի գիրն։ Եւ առաքեալ այր մի թղթիւք հանդերձ առ Նիկողոս վարդապետ ոմն, որ եկեալ էր վասն ժողովի իւր և նստեալ դեռ ես յեկեղեցի Սրբոյն Նիկողայոսի, թէ Իմ աթոռակալ ես և վէքիլ, հայեա՛ց ի ժողովուրդդ և կա՛լ զգալուր եկեղեցոյն և աթոռոյն գրով, մինչև եկից ես։ Եւ աշխարհականք որք էին իշխողք, զորոց պատիւն առացեալ եմք յառաջին գիծսն, ի մի վայր հաւաքեալ